

NAVASART

ORGANO DE LA U. G. ARMENIA DE CULTURA FISICA



ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ Հ. Մ. Ը. Մ.-Ի

ԱՊՐԻԼ 1957

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ապրիլ 24	ԽՄԲԱԳՐԱԿԱՆ	1
Զուարճալի գրուագներ Սիմոն Վրացեանի եւ շորճ Մարտիկ- եանի կեանքից	Ռէն	4
Շորճ Մարտիկեանի կեանքից,	Ռէն	10
Սկառուտութիւնը	Մ. ՆԱՆԸԳԵԱՆ	19
Հ. Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի փոխյարաբերութիւնները Կ.Շ.		23
Սկառուտական շարժում		24
Pueblo mártir	EDITORIAL	25
Armenia, antes de la matanza		26
Armenia fué el 1º reino del martirio	R. MIRAKIAN	28
Armenia durante las matanzas		33
Homenetmen en Armenia	SPORTMEN	36
Filántropo	ALBERTO NACACHIAN	37
Higiene moral	RAFMIK	38

ՎԱՐՉԱԿԱՆ ԱԶԴ

Արդէն յայտնի է մեր յարգոյ բաժանորդներուն, որ դեռ տարի մը առաջ, բուզքի եւ տպագրութեան սղութեան պատճառով, բոլոր հրատարակութիւնները բարձրացուցին իրենց փոխարժէքը: Ուստի մե՛նք իւր ստիպուած ենք, Յունուարէն սկսեալ, համեմատական յաւելումով մը, ամսաթերթիս տարեկան բաժնեգինը ճշանակել 50 փետո: Արտասահմանի համար 3 տոլար: Արդ, կը խնդրենք մեր յարգոյ բաժանորդներէն, որ դիւրացնեն մեր գանձումները այս վերջիմ սակով:

"ՆԱԻՍՍԱՐԻ"Ի ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ա Պ Ր Ի Լ 24

Նորէ՞ն Ապրիլ 24...:

Այո՛, նորէն, կրկին եւ յաւիտեանս:

Չենք կրնար մոռանալ համազգային այս մեծ աղէտը:

Հայաստանի կէսը գերեզման իջաւ մէկ օրէն միւսը:

Մարդկութեան, եւ մա՛նաւանդ հայութեան գահիճը լրիւ կերպով կատարեց իր նողկալի պաշտօնը...:

Այս տխուր առիթով աւելորդ են խորհրդակցութիւններ, պատճառաբանութիւններ, ինչպէս եւ վերլուծումներ, փոխադարձ մեղադրանքներ եւ ուշացած մարգարէութիւններ:

Մեզ կը մնայ, ամէն տարի, այս տխուր առիթով, երկիւղածութեամբ եւ համախումբ ոգեկոչել մեր նահատակաց գաղափարը, գործը եւ գերազոյն նուիրումը:

Միայն յիշատակութիւններ եւ սգահանդէսներ բաւական չեն յաւերժացնելու անոնց յիշատակը:

Անոնք իրենց նահատակութեամբ մեզմէ կը պահանջեն իրական, դրական եւ գործնական դատաստան մը: Դժուար թէ անոնց հոգիները հանգիստ ըլլան մի միայն մեզմէ ճառեր եւ համակրալից արտայայտութիւններ լսելով: Անոնք դա՛տ կը պահանջեն, ու կը սպասեն մեր վճիռին, ու մանաւանդ անոր գործադրութեան, որքան ալ ան երկարաձգուի կամ ուշանայ:

Ի՞նչ պէտք է ըլլայ մեր գատաստանը, եւ ի՞նչ պէտք է ըլլալ նա՛եւ մեր վճիռը:

60-97
A.R.A.R.@

Մեր դատաստանը եւ վճիռը պարզ պէտք է ըլլայ բոլորիս եւ դաւոյց բոլոր սերունդներուն:

Մեր գիրկն առնել այն հողը, որ ոռոգուած է անոնց արցունքով եւ արիւնով եւ ուր անոնք մասնիկները կը կազմեն Մայր Երկրին: Իսկ մեր Մայր Երկիրը դեռ լուր առ ամբողջական չէ:

Այո՛, տարուան մէջ օր մը պէտք է լանք ու սգանք, յիշելով մեր նահատակները, բայց այսուհետեւ պէտք է վարժուինք խնդալու ՅԵԱ օր յանդգնութեամբ եւ տոկոսնութեամբ, վասնզի եթէ մեր նահատակներու մէկ մասը մեռաւ անբարբառ համակերպութեամբ, դիմադրական անկարելի պայմաններու մէջ, միւս մասը, սակայն, հերոսական ընդվզումով ընկաւ, հեզներով մահն ու դահիճը: Անոնք մեզ աւանդ մը թողուցին դիւցազնութեան, որ անօրինակ կը մնայ ոչ միայն Հայոց, այլ միջազգային պատմութեան մէջ: Անոնք կուսեցան հրազէններով, երբ ունէին, ու կրուսեցան բերերով, քարերով, փայտերով եւ մերկ ձեռքերով, երբ այլեւս անգործածելի էին իրենց հրազէնները եւ պարպած էին իրենց վերջին գնդակը:

Մեր դատը շահելու համար՝ ահա՛ այսպիսի սերունդներու պէտք ունինք: Մեր դպրոցը, մեր ընտանիքը, մեր հանրային հաստատութիւնները եւ մարզադպրոցները այս ուղղութեամբ պէտք է մտածեն նաեւ: Պա՛րտք ունինք նահատակաց, եւ զայն պէտք է վճարենք յաւելեալ տոկոսներով:

Այս տեսակէտէն, իբրեւ դաստիարակիչ ելոյթ, գալթաշխարհի մէջ թերեւս առաջին անգամ ըլլալով, Պուէնոս Այրէսի Հայ գաղութը սքանչելի օրինակ մը տուաւ, Ապրիլ 21-ը յայտարարելով ազօրթի, հսկումի եւ խոկումի օր: Մեր հայրենակիցները, խումբ մը հայրենասէր երիտասարդներու խորհուրդով եւ թելադրանքով, փակեցին խանութները մահազդով մը, դադարեցուցին բոլոր գործառնութիւնները, ինչ որ կատարուեցաւ նոյնութեամբ եւ սիրով: Ու մեր գաղութը, առանց յարանուանական, կուսակցական, հատուածական եւ խմբակցական տարբերութեան, ամբողջ օրը հսկումի եւ խոկումի յատկացնելով, համախումբ եւ երկիւղած «Հայ Կեդրոն» հաւաքուեցաւ, ապրելու պահը մեր պատմութեան մեծագոյն ողբերգութեան, ու նա՛եւ դիւցազնիւրգութեան:

Ասիկա նոր վկայութիւն մըն է, որ ոչ միայն թարմ կը մնայ յիշատակը ժեր անթիւ նահատակաց, այլ աւելի կը խորանայ, կը լայննայ եւ իրական կը դառնայ այն Դատը, որ մեզ վստահած են գոհերը:

Չոհերը նաեւ մեզի կը խօսին՝ իրենց կեանքի իսկ վկայութեամբ թէ՛ Հայ ժողովուրդը բարեկամներ չէ ունեցած, եւ չունի: Եւ թէ՛ այն յոյսը, որ մենք ժամանակին կապած ենք եղեր «խաչապաշտ» բարեկամներուն, լոկ ինքնախաբէութիւն եւ պատրանք:

Ապրիլեան Եղեռնի օրերուն, մեր «խաչապաշտ բարեկամին» հսկայ բանակները օղակած էին Թուրքիա եւ արի մը տարածութիւն միայն զիրենք կը բաժնէր զոհերէն, որոնց աղեխարշ ճիշերըն նոյնիսկ լսելի էին, բայց այդ բանակները քայլ մը առաջ չգացին՝ փրկելու համար անգէն եւ անմեղ զոհերը: Երբ Դահիճը կատարեց իր աներեւակայելի ոճիւրը եւ Հայաստանի կէսը մաքրագործեց հայերէն, յաղթական բանակը, ընդամէնը 15 օրուան մէջ գրուեց կարինը եւ խիզախեց մինչեւ Բարերդ, այսինքն՝ հեռուոր մի շրջան պատմական Հայաստանի: Այսպէս վարուեց մեղ հետ մեր «բարեկամ» եւ մօտաւոր սուրբը: Իսկ հեռուոր «Սուրբերը» միայն յօժարեցան մեզ «փշուրմ հաց» տալու իբրեւ արգահատելի բազմութիւններ:

Նոր սերունդները այս մէկը լաւ պէտք է յիշեն ու ըստ այնմ պատրաստուին զոհերուն դատը պաշտպանելու:

Մեր իմաստուն հայերը արդէն բանաձեւած են օտար «բարեկամներ» ունենալու խաբկանքը եւ դժբախտութիւնը:

«Օտարէն չկայ յոյս»:

Այս իմաստութիւնը ապացուցուեցաւ նաեւ Ապրիլեան առատ արիւնով:

Ապրիլեան Եղեռնէն ա՛յս դասն ալ քաղենք...:

ՃՈՐՃ ՄԱՐՏԻԿԵԱՆԻ ԵՒ Ս. ՎՐԱՅԵԱՆԻ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Այս երկու ազգային եւ կրթական անուանի գործիչները, որոնք ամբս մը մնացին մեզ մօտ իբրեւ հիւր, ունեցան բարոյական եւ նիւթական անբնականայնի յարգութիւն: Անոնք ձեռնհասօրէն հայութիւնը ներկայացուցին պետական շրջանակներուն, ինչպէս եւ Արժանքի մեծ ազգին, մեր մասին ստեղծելով համակրանք եւ յարգանք: Տեղակամ մտմուլը համակրելի յօգուածները նուիրեց մեր ազգին, անդրադառնալով մեր ազգային պետականութեան եւ հարուստ մշակոյթին: Գրեթէ ամէն օր ունեցան հաւաքոյթներ եւ հրապարակային բանախօսութիւններ, նուիրուած ազգապահպանման կարեւոր հարցին, ստեղծելով գերազանց խանդավառութիւն: Փայլանեան ձեռնարանի 25-ամեակի տօնակատարութիւնը պատմաւ եղաւ, որ Պ. Ալլերը եւ Գարուստեան, լիառատ եւ ինքնակամ դրամական նուէրներ ընեն կրթական այդ մեծ հաստատութիւնը տնտեսական գարնան ժամանակ: Ճորճ Մարտիկեանը, պերճախօսութեամբ եւ անզլիւրէն լեզուով, դասախօսութիւն մը կարդաց Արժանքի բարձրատիման գիմնարականներուն, նիւթ ունեցնալով բանակի պարեմաւորման հարցը: Մեր հիւրերը այստեղէն մեկնեցան հիանալի տպաձորութիւններով, ինչպէս եւ մեր մէջ թողնելով անմոռանալի յիշատակներ:

ՋՈՒԱՐՃԱԼԻ ԴՐՈՒԱԳՆԵՐ ՍԻՄՈՆ ՎՐԱՑԵԱՆ ԵՒ ՃՈՐՃ ՍԱՐՏԻԿԵԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

(Հիմ Յիշատակներ)

Գրեց՝ Ռէն

Այս երկու անուանի հիւրերը եկել են մեր հեռուոր աշխարհը ազգայաւիպտանմա՞հ կարեւոր առաքելութեամբ: Նրանց ներկայութիւնը աւիթ տուաւ, որ ես նորից անդրադառնամ իմ վաղեմի յիշատակներին: Եւ ահա դրի առի երկու զուարմալի դրուագներ, որոնց մէջ Ս. Վրացեանը եւ Ճորճ Մարտիկեանը հանդիսանում են իրբեւ զլիաւոր դերակատարներ:

Ս. ՎՐԱՑԵԱՆԻ «ՄԵՄ ՔԻՒՐՏԸ»

Նախապէս ասեմ, որ Ս. Վրացեանի հետ ես ծանօթ եւ բարեկամ եմ աւելի քան քառասուն տարիներ:

Աւաջին անգամ ծանօթացանք Քիֆլիսում, 1914-ին, երբ արդէն սկսուել էր կամաւորական շարժումը: Ես այն ժամանակ Քիֆլիսի մեծ օրաթերթ «Հորիզոն»ի խմբագրական կազմի մէջ էի: Իսկ Ս. Վրացեանը խմբագրական էր Բոստոնի «Հայրենիք» թերթի: Եւ ահա թողել էր իր պաշտօնը եւ եկել էր Կովկաս, աւելի կարեւոր դերեր ստանձնելու: Այդ օրերին, ինչպէս յայտնի է, հայկական Քիֆլիսը արտակարգ եռ ու դեռի մէջ էր, ուր, բոլոր զաղութներէց, հասնում էին մեր ակննաւոր գործիչները, մտաւորականները եւ մանաւանդ հայ ռազմիկները: Խուս բանակը կազմ ու պատրաստ էր խոյանալու մեր զարաւոր ոսոխի վրայ: Պատերազմը անխուսափելի էր, որի մէջ խոչոր դեր էր վերապահուած մեր կամաւորական զուեղերին:

Մեզ համար կախարդական օրեր էին:

Վերջապէս, պայթեց ուռւ-թրքական պատերազմը: Խանդավառութիւնը աննկարագրելի էր: Մեր ազգային գաղափարների իրականացումը մօտալուս էր երեւում: Պիտի ողջունէինք մեր Արշալոյսը, որին սպասում էինք հինգ դար շարունակ:

Ճիշտ այդ օրերին, Երեւանի նշանաւոր հրապարակում, մի բարձրահասակ, ամբախազմ եւ լուրջ երիտասարդ մօտեցաւ ինձ եւ մտերմական եղանակով ասաց.

— Քեզ հետ խօսելիք ունեմ:

Ծանօթացանք: Ս. Վրացեանն էր: Առաջարկեց ինձ անմիջապէս Հիւս Ամերիկա մեկնել եւ ստանձնել «Հայրենիք»ի խմբագրութիւնը: Չմտապաւնկարագրել Ամերիկայի նպաստաւոր պայմանները, ինչպէս եւ յիշեց Վրամեանի, Ակնունիի եւ ուրիշների անունները, որոնք իրենից շատ առաջ խմբագրել էին այդ թերթը: Մի պահ լռեցինք: Ի՞նչպէս, մտածում էի, ամբողջ զաղթաշխարհը թափուած է Կովկաս, ողջունելու մեր ազատութեան Արշալոյսը, ու ես պիտի գնամ հեռուոր Ամերիկա, թէկուզ խմբագրապետի պաշտօնով:

Ս. Վրացեանը անմիջապէս զգաց իմ չկամութիւնը եւ այս անգամ առաջարկեց, որ գոնէ թղթակցիմ «Հայրենիք»ին, տալով կարեւոր լուրեր ռազմաճակատից եւ նկարագրել Կովկասի ընդհանուր կացութիւնը:

Այս առաջարկութիւնը չկարողացայ մերժել:

Ամբողջ երկու տարի, զանազան անուններով, կատարեցի իմ պարտական

նութիւնը: «Հայրենիք»ը գոհ էր, ինչպէս եւ ուրախ էր Ս. Վրացեանը: Այդ օրից սկսեալ մեր բարեկամութիւնը տեւական եղաւ:

Ասկայն քաղաքական եւ դիւնուրական դէպքերը յաճախ մեզ բաժանեցին տարբեր ուղղութիւններով եւ տարբեր պարտականութիւններով: Որոշ ժամանակ Ս. Վրացեանը մնաց Քիֆլիս իբրեւ Ազգ. Բիւրոյի անդամ, յետոյ ճակատ մեկնեց այլ կարեւոր պաշտօններով: Ես էլ, 1915-ին, մեկնեցի Վան, ուր մտաւորականների մեծ կարիք կար, ապա, 1918-ին, հասայ Կարին եւ սպարեցի այս երկու վարչերի մեծ ողբերգութիւնը:

Եւ ահա՛ Հայաստանը Ազատ եւ Անկախ էր: Արիւնից ու արցունքից ելած՝ կազմուել էր մեր հարազատ պետութիւնը: Ս. Վրացեանը խորհրդարանի անդամ էր, վարում էր նաեւ այլ կարեւոր պաշտօններ, ինչպէս եւ խմբագրապետն էր կառավարութեան առաջին պաշտօնաթերթ «Յառաջ»ի:

Լսելով, որ ես Քիֆլիսից ժամանել եմ Երեւան, լուր դրկեց, որ հանդիպիմ իրեն: Անմիջապէս ներկայացայ եւ մեր տեսակցութիւնը եղաւ շատ սիրալիկ: Ուրախ էինք, որ նորից հանդիպում ենք իրար, բայց այս անգամ ո՛չ թէ Վրաստանում, այլ Ապատ եւ Անկախ Հայաստանում:

Անմիջապէս բացատրեց իր նպատակը եւ առաջարկեց, որ մտնեմ խմբագրական կազմի մէջ, կառավարական օրկանը աւելի ճոխ եւ բովանդակաւից դարձնելու համար: Յաւ. յայտնեց, որ մեր գրողների եւ մտաւորականների մեծ մասը դեռ յամառում է մնալ Քիֆլիս, փոխանակ Հայաստան տեղափոխուելու եւ աշխատելու: Սիրով ընդունեցի նրա առաջարկը եւ յաջորդ օրն իսկ անցայ պաշտօնիս գլուխը:

Մանոթանալով խմբագրական կազմին եւ աշխատանքներին, մնացի վարժացած:

Ս. Վրացեանը կառավարական զանազան ծանր պաշտօններ էր վարում, մտաւորականների չգոյութեան պատճառով: Նա անդամ էր կառավարական կուսակցութեան բիւրօյին եւ խորհրդարանին, ինչպէս նաեւ աշխատում էր պետական այլ եւ այլ Յանձնախումբերի մէջ. եւ ահա՛ նրա վրին փաթաթել էին նաեւ «Յառաջ» օրաթերթի խմբագրութիւնը: Ինչպէս ասում են, գլուխ բորելու ժամանակ չունէր, Ամէն կարեւոր պաշտօն որ բաց էր մնում, նետում էին Վրացեանի վրայ, հաւատացած լինելով նրա կարողութեան, բարեխղճութեան եւ մանաւանդ աշխատասիրութեան:

Նրան իբրեւ օգնական տուել էին Արշակ Յովհաննէսեանը եւ Արշակ Մեհրապեանը:

Առաջինը նոյնպէս մի քանի պաշտօններ էր վարում եւ անգամ էր խորհրդարանի: Իսկ արհեստագիտական ամբողջ գործը յանձնուած էր Արշակ Մեհրապեանին, որի պարտականութիւնն էր պատրաստի նիւթերը հաւաքել, դասաւորել եւ յանձնել տպարան, կանխելու համար խմբագրութեան եւ գրաշարների միջեւ եղած անհամութիւնները: Երբեմն էլ թարգմանութիւններ էր անում: Ա. Յովհաննէսեանի պարտականութիւնն էր՝ Կովկասեան քուլը թերթերը թղթատել եւ կարեւոր լուրերն ու յօդուածները նշանակել՝ արտատպութեան կամ թարգմանութեան համար:

Ս. Վրացեան ամէն օր խմբագրական էր դրում եւ կարդում էր կարեւոր յօդուածները՝ հիւրընկալելու կամ մերժելու համար:

Երբ պաշտօնի անցայ, պարտականութիւնների նոր բաժանում տեղի ունեցաւ: Ռուսական զանազան թերթերի նշանակուած կարեւոր լուրերն ու յօդուածները ես պիտի թարգմանէի: Պիտի սրբապէ՛ի նաեւ ընդունուած յօդուածների լեզուն: Գրութեանց լողանքը, որ ես պիտի կատարէի, տաժանեւի էր:

Ս. Վրացեանը ճշդապահ՝ խմբադրականները հասցնում էր ժամանակին :

Ու նա'եւ ուղղամիտ էր : Հակոտոկ որ պարտաւոր չէր խմբադրականները նախապէս մեզ ներկայացնելու դիտողութեանց համար, բայց կարգում էր : Դուրս էր գալիս բիւրոյի գրասենեակից, որի դուռը բացում էր խմբադրասան մէջ, կարգում էր խմբադրականը հանդարտ եղանակով, և սպասում էր մեր դիտողութեանց :

Ինական է, ես միայն լուծում էի, անթույլատրելի համարելով որեւէ դիտողութիւն անելու, ո'չ լեզու և ո'չ էլ բովանդակութեան մասին : Սակայն Արշակները, Յովհաննէսեան և Մեհրապեան, որոնք տարեկից էին Վրացեանի, պարզապէս մի բան ասելու համար, հարկ էին համարում որեւէ դիտողութիւն անելու : Վրացեանը հանդարտորէն պաշտպանում էր, պատշաճօրէն և տրամաբանօրէն հերքելով նրանց դիտողութիւնները : Երբեմն վէճը զուարճալիօրէն սաստկանում էր և կողմերից իւրաքանչիւրը կարծես սպասում էր մի երրորդի միջամտութեան : Ես հօ յիմար չէի՞ նրանց վիճարանութեան խառնուելու : Գտե՛լ էի նրանց հաշտեցնելու հեշտ եղանակը : Անմիջապէս հրապարակ էի նետում գրաշարների ահաբեկչութիւնը :

— Գրաշարները սպասում են խմբադրականի, թերթը պիտի ուշանայ : Իսկ դուք վիճում էք :

Իմ այս յայտարարութիւնը բաւական էր, որ վիճող կողմերը, ինչ զնով էլ լինի, հաշտութիւն կնքէին, ազատուելու համար գրաշարագետից, որ յանկարծ կարող էր տնկուել խմբադրատունը և մի նոր վէճ շղթայագործել :

Ինչպէս յիշատակեցի, «Յառաջ» խմբադրատունը պատկից էր կառավարական կուսակցութեան Բիւրոյի գրասենեակին, որի միակ մուտքը խմբադրատան սենեակից էր, հետեւաբար ժողովականները, կամայ թէ՛ ակամայ, մեզ պիտի այցելէին ժողով գումարելուց առաջ :

Ինչպէս որ հայ խմբադիրը սարսափում է հայ գրաշարից, այնպէս էլ մենք ահ ու զողի էինք մատնում, երբ բիւրոյի ժողովի օրերը մօտենում էին : Շարաթը մէկ և, հարկ եղած պարագային, աւելի անգամներ ժողովներ էր դումարում բիւրոն, Մեր առաջ բարեկամները զուարթ ներս էին մտնում, երբեմն զոյգ առ զոյգ, և իւրաքանչիւրիս հետ կատակելով, անցնում էին ժողովատեղ :

Մենք կատակելու, նոյնիսկ խնդալու ժամանակ չունէինք, միայն աղօթում էինք, որ ժողովը փակուի պակաս աղմուկով :

Ժողովականների մէջ անբաժանելի զոյգ էին կազմում Ռուբէն Տէր Մինասեանը և Ս. Վրացեանը : Այս երկուսը միշտ միասին էին, եղբայրական ջերմութեամբ : Արամից յետոյ, կարծեմ, Վրացեանը Ռուբէնի ամենասիրելի ընկերն էր : Նրանց կողում էինք «Երկուտրեակներ» :

Ռուբէնը սիրահար չէր վէպի և բանաստեղծութեան, սակայն մեծ չափով հետաքրքրում էր պատմութեամբ և գրական գիտութիւններով : Գրողներին յաճախ ծաղրում էր :

Երեւանեան մի հրաշալի օր Ս. Վրացեանը խմբադրատուն մտաւ և սովորական բարեւից յետոյ մօտեցաւ ինձ և մի յօգուած դնելով գրասեղանիս վրայ, ժպտալով ասաց .

— Քեզ նոր աշխատակից եմ գտել :

Յետոյ՝ ըստ իր սովորութեան, հանդարտ օրօրուելով, և յայտնապէս գոհունակ, սկսեց բացատրել թէ ո'վ է հեղինակը, և թէ յօդուածը ուղղակի մի դիւտ է, մի հրաշալի ուսումնասիրութիւն քրդական կեանքից, մասնաւորապէս ցեղախումբերի մասին : Ասաց նաեւ, որ յօդուածի լեզուն չափազանց խառն է գաւառաբարբառներով . լիացած է Վանի, Մուշի և

Սասունի, արարատեան դաշտի եւ այլ շրջաններէ բարբառներով: Մէկ խօսքով, ո՛չ արեւելահայերէն եւ ո՛չ էլ արեւմտահայերէն է նոյնիսկ հայերէն չէ՛: Սակայն, ինչպէս ասացի, շարունակեց Վրացեանը, ցեղագրական եւ աշխարհագրական տեսակէտից վերին աստիճան լուրջ ուսումնասիրութիւն է: Մինչ Վրացեանը խօսած էր ողելորուած, ես զբքրում էի յօդուածը, որի ձեռագիրը բեւեռագրեց աւելի դժուար ընթեռնելի էր: Դժգոհութիւնս յայտնապէս նկատելի էր:

Կարճ կապելու համար՝ Վրացեանը եզրակացրեց .

— Յօդուածագիրը մի մեծ ջիւղ է, յարգուած եւ ազդեցիկ մի ցեղապետ, որին եթէ կարողանանք կապել «Յատաջօնի հետադաշում շա՛տ աւելի արժէքաւոր գրութիւններ պիտի տայ: Միայն մնում է, որ նոյնութեամբ պահենք իր մտքեր ու արտայայտութիւնները եւ լեզուն հայրենի վերածենք: Այն պարագային եթէ սրբազրութիւնից յետոյ չհասնի իր լեզուն, ջրովարի պիտի խռովի ու մենք պիտի կորսնցնենք մի արժէքաւոր աշխատակից:

Եւ նկատի ունեցի՛ր, զգուշացրեց Վրացեանը, որ ջիւղը կարճ ժամանակ է յաճախել հայկական դպրոցը եւ այսքանն էլ որ դրում է, մե՛ծ բան է:

Այս երկար զարողի յաջորդեց Վրացեանի շացուցիչ խոստումը, որ ինձ համար շատ կարեւոր էր:

Այն ժամանակ Երեւանում ծխախոտ գտնելը հրաշքի պէս բան էր: Սակայն վարպետ մաքսանենջները երբեմն յաջողում էին Վրաստանից հիանալի ծխախոտներ բերել եւ վաճառել աներեւակայելի գներով:

Վրացեանն ասաց, որ ջիւղտ յօդուածագիրը ոչ միայն տառա, այլ ընտիր ծխախոտներ է ծխում, որից բաժին պիտի հանի յօդուած սրբազրոյին, եթէ տպուկելուց յետոյ հասնի իր լեզուն, ոճը եւ րովանդակութեան հարազատութիւնը:

Վերջացնելով իր խօսքը, Վրացեանն ասաց խնդալով .

— Դե՛հ, զեղ տեսնեմ, արա՛ սուսելազոյնդ որպէսզի այս «Մկժ Բիւրդ»՝ հայ դրոզ դարձնենք:

Ծխախոտ ունենալու հեռանկարը դրաւիչ էր: Մոտապայ յաջորդ օրն իսկ սրբազրուած յօդուածը յանձնել տպագրութեան:

Տուն դալով՝ յօդուածը կարդացի մի քանի անգամ, վարժուեցայ ձեռագրին. երբորդ անգամ կարդացի յատկապէս բովանդակութեան եւ արտայայտութեանց ծանօթանալու համար: Եւ զգացի, որ յօդուածագիր ջիւղը հասուն միտք եւ մեծ փորձառութիւն ունի, ու պիտէ իր նիւթը սկսել եւ զարգացրնել հետեւողականօրէն: Սակայն մեր «Բիւրաճ» բալորովին դիմաթափ էր, այսինքն՝ գուրկ տարբական հայերէն գրելու հաճոյքից:

Սակայն նրա տողերի մէջ պատկերանում էր ինձ մեր պատկառելի եւ անդիր Բիւրաճ, որ ո՛վ պիտէ, քանի գիշերներ է լուսացրել աւարտելու համար յօդուածը, ա՛յն էլ Հայոց լեզուով եւ Մեսրոպեան տառերով: Այսպէս մտածելով, աւելանում էր իմ համակրանքը անծածօթ Բիւրաճի հանդէպ, որ Ազատ եւ Անկախ Հայաստանի մայրաքաղաքում նստած հայերէն գիր է գրում, եւ դրում է գիրը ջիւղտերու եւ յատկապէս ջիւղտ ցեղախումբերի մասին:

Հէ՛յ ժամանակներ, ինչքա՛ն փոխուել էք, մտածում էի:

Եռանդա կրօնապատկելով, սկսեցի յօդուածը թարգմանել «հայերէնից» հայերէնի, ուշադիր արտազրելով:

Ամբողջ գիշերը աշխատեցի եւ ձեռագիրը կրկին մաքուրի ցալեցի:

Անքնութիւնից եւ ծուխից աչքերս ուռել էին: Արդէն լոյս էր ու ես գո՛հ էի: Անմիջապէս տպարան վազեցի եւ գրաշարապետին յանձնեցի յօդուածը, ու պատուիրեցի, որ խիստ ուշագիր չարեն:

Նոյն օրն իսկ լռյա տեսաւ գրութիւնը, «Քիւրտերը խորագրով, երկու սիւնակի վրայ եւ շարունակելի:

Յաջորդ օրը Վրացեանն եկաւ խմբագրական գրելու: Գո՛հ էր եւ զուարթ: Մօտենալով գրասեղանիս, ասաց.

— Հիանալի է, «Քիւրտը» նոյնպէս գո՛հ է եւ զարմացել է իր կարողութեան վրայ եւ մանաւանդ լեզուի վրայ. անհամբեր սպասում է վերջաւորութեան:

— Իսկ ծխախոտնե՛րը... կատակեցի:

— Մի օր հետո պիտի բերեմ քեզ ծանօթացնելու, ասաց Վրացեանը, պարզ, աղնիւ եւ թոռուն քիւրտ է. իր խոստումը պիտի կատարի անշուշտ:

Եւ անցաւ բիւրոյի գրասենեակը:

Մի քանի վայրկեան յետոյ ներս մտաւ նաեւ Ռուբէն Տէր Մինասեանը, որ մոյլ ծխող էր եւ լուցիկ երբեք չէր գործածում:

Երբ լաւ տրամադրուած էր, խօսքից աւելի ձեռքի կատակ էր սիրում: Մէկին կամ միւսին հարուածում էր բունցքով, եւ կամ՝ ոլորում էր ականջները եւ տրորում էր քիթը: Փոխադարձութեան պարագային ցից կանգնում էր, գրեթէ անշարժ:

Այգ օրը Հանդարտօրէն կանգնեց գրասեղանիմ առջեւ եւ մի պահ դիտեց ինձ...: Ես իսկոյն պատրաստուելի խուսափիլ նրա ոտիէ հարուածից, որ այնքա՛ն վարպետօրէն եւ անսպասելի գիտէր իջեցնել: Յանկարծ մեղմացաւ, ժպտեց եւ մազերս քնքշօրէն խոտնելով, ասաց.

— Վրպասանները եւ բանաստեղծները պարապ գլուխ ունին: Գո՛հ էի, ազատուելով Ռուբէնի ֆիզիքական կատակներից:

Յետոյ՝ մի տուփ ծխախոտ սահեցնելով առջեւս, յարեց.

— Գրպանդ դի՛ր, շուն շանգէլներ կուգան եւ բոլորը կը ծխեն:

Բիւրոյի ժողովի օր էր: Մէկիկ մէկիկ ներս մտան միւս աւագները եւ, սեղանների վրայ թափթիփուած հայերէն եւ ռուսերէն լրագիրները թեթեւօրէն աչքէ անցնելով, անցան իրենց գրասենեակը:

Մէր «Մեծ Քիւրտ»ի յօդուածը «Յառաջի մի քանի համարում տպուել վերջացել էր: Մեծ հետաքրքրութիւն կար ամէն կողմ, մանաւանդ մտաւորականների մէջ: Շատեր ուզում էին տեսնել հոդիւնակին կամ տեղեկութիւններ քաղել նրա մասին:

Եւ ա՛հա մի օր, սովորականի պէս, մեր ծանօթ երկուորեակը, Սիմոն Վրացեան եւ Ռուբէն Տէր Մինասեան, թեւանցուկ ներս մտան, ուրախ եւ ժպտուն: Ու կանգնեցին գրասեղանիս առջեւ, խորհրդաւոր լուծեամբ: Աշխատանքս դարդերի եւ նայեցի նրանց, գրեթէ կը խնդային:

— Ա՛ռ քեզի պապիրոս մը.— ասաց Ռուբէնը, եւ ինքը Մի ուրիշը վառեց ազահարար:

Ուրախութեամբ վերցրի զլանակը:

Ժողովի օր է, մտածեցի...:

Եւ Ս. Վրացեանը, ժպտողէմ, ասաց.

— Ոոստացել էի քեզ ծանօթացնել մեր «Մեծ Քիւրտին», ծանօթացէ՛ք: «Քիւրտերը» յօդուածի հեղինակը: Ռուբէնի մեկնած ձեռքը թողեցի օդի մէջ, ծաղրելի չդառնալու համար:

Բայց երբ Ռուբէնը ընտրի ծխախոտի մի քանի տուփեր սահեցրեց սեղանիս վրայ, հաւատացի, որ դործ ունիմ յօդուածագիր «Մեծ Քիւրտ»ի հետ:

Ռուբէնի գիւտը, մեր գրականութեան մէջ, պարտական ենք Սիմոն Վրացեանին: Նա՛ էր, որ առաջին անգամ հրապարակ քաշեց Ռուբէն Տէր Մինասեանին զրգելով, խրախուսելով եւ նոյնիսկ ստիպելով, որ դրի առնի իր հարուստ յիշատակները:

Գրելու համը մնաց Ռուբէնի բերանը:

Մանօթ քաղաքական դէպքերը շուտով մեզ աշխարհացրիւ արին, եւ Ռուբէնը ազատ ժամանակ ունեցաւ գրելու, մանաւանդ բախտաւոր եղաւ ընկ-նելու մի ուրիշ վարպետի ձեռքը, որ «Հայրենիք»-ների խմբագրապետ Ռուբէն Դարբինեանն է:

Եթէ Ս. Վրացեանը գտաւ «Ռուբէնեան»-ն հանքը, սակայն Ռ. Դարբինեանը կարողացաւ զայն պեղել, գտել, մինչեւ յատակը՝ հրապարակ դնելով հատորները Ռուբէնի յուշագրութեան, որոնք յետին մանրամասնութեամբ, ընդգրկում են ամբողջ կէս դարու մեր քաղաքական, ընկերային, ազգազրբական եւ յեղափոխական փոթորկալից եւ հարուստ անցեալը:

Ինչպէս մե՛նք հիմա, հետազային մեր ուշիմ պատմաբանները պիտի դան շնորհակալ լինելու այս երեք վարպետներին հաւասարապէս, ա՛յն անդնա-հատելի նպաստի համար, որ բերին մեր մշակոյթին:

Յաւե՛րժ յիշատակ Ս. Վրացեանի ՎՄԵԹ Գիւրտոյնի:



Օճնիկ Եազմանեան (Սկաուտապետ),
Օր: Արծուիկ Ալոյշեան (Սկաուտապետ)
Ճորն Մարտիկեան (Սկաուտապետ)
Քաշուած Երեւանի մէջ, 1920ին

Վազգէն Տէր Անտրեանեան Ճորն
Մարտիկեան քաշուած Պոլսոյ մէջ

ՃՈՐՃ ՄԱՐՏԻԿԵԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

(ՀԻՅ ՅԻշատակներ)

Գրեց՝ Ռէն

Իմ այլազան յուշերի մէջ կարեւոր տեղ է գրաւում նա՛նև ճորճ Մարտիկեանը, որ Համաշխարհային Համբաւի տիրացած մեզ մօտ է հիւրաբար:

Երկար տարիներ նրա կեանքը մնաց իմ յիշողութեան մէջ որպէս չքնաղ մի հէքեաթ իր խաղաղ եւ մանկունակ սկիզբով, փոթորկալից դարգացումով եւ եղերական վախճանով:

Յաճախ երբ քրքրել եմ իմ վաղեմի յիշատակները, որոնց մէջ շատ սիրելի դէմքեր կան, ամենից առաջ ինձ պատկերացել է պատանի ճորճը, որ մի օր եկաւ ազատագրուած Հայաստան եւ ինքն իրեն նետեց հայկական ամենակուլ Հնոցում, յաւերժութեան անցնելու համար:

Բայց ինչո՞ւ միայն խօսել այս սքանչելի հէքեաթի մասին, երբ կարելի է այն պատմել իրրեւ ճշմարիտ եղելութիւն:

1914-ի երանելի օրերին ես ծանօթացայ մի հայ սպայի, որ Սեպուհի հետ եկել էր Թիֆլիս հայ կամաւորական գունդեր կազմելու համար: Մեր փոխադարձ տպաւորութիւնը հիանալի էր եւ այնուհետեւ մնացինք մտերիմ բարեկամներ, ու մինչև այսօր: Այդ սպան Գրիգոր Ամիրեանն է, որ բարեբախտաբար ներկայ է հարգատ անցեալով, եւ այժմ ապրում է Սան Ֆրանցիսքո: Արժանաւոր մօրեղբայրն է մեր ճօրճ Մարտիկեանի: Ուսանել է Պոլսոյ Թուրք զինուորական բարձրագոյն վարժարանի մէջ եւ այն աւարտել է առաջնակարգ յաջողութեամբ:

Մասնակցել է Բալկանեան պատերազմին: Էտրինչի անհզ ճակատամարտների ժամանակ, զինադադար կնքելու համար, յաճախ առիթներ է ունեցել շփուելու Բուլղար սպաների հետ, առաջաւոր դիրքերում, իբրեւ բանազնաց: Օգտուելով պատեհութիւնից միացել է Բուլղար բանակին, իր սուրբ դարձը ներով մեր դարաւոր ոտոխի դէմ: Մտերիմ զինակից է եղել Անդրանիկի, Մուրատի բայց մանաւանդ Սեպուհի:

Մասնակցել է Դիլիմանի (Պարսկաստան) բախտորոշ ճակատամարտին Անդրանիկի եւ Սեպուհի հետ, գլխաւոր հրամանատարութեամբ զօրավար Նազարէկեանի: Ոստիկ փաշայի գերագանց բայց ջախջախուած բանակի հետապնդման մէջ կարեւոր դեր է ունեցել:

Ճիշտ նոյն օրերին ջախջախիչ պարտութիւն է կրում նաև Էնվէր փաշայի մօտ 300 հազարնոց բանակը Մարիդամիչի ճակատամարտներում: Ապա 1916-ին, երբ ուռւական յաղթական բանակը Հասնում է Բայրուրտ, Սեպուհը, Մուրատը եւ սպայ Գրիգոր Ամիրեանը անմիջապէս փոխադրուած են այդ շրջանը, զինուորական նոր եւ կարեւոր առաքելութեամբ: Հակառակ ուռւ հրամանատարութեան չկամութեան, նրանք, ընտրովի հայ կտորիճներով, «մաքրագործման» մեծ գործ են կատարում: Ապա՝ «Մի հայ մի սպի» կարգախօսով, շլացուցիչ «առեւտուր» են սկսում Թուրքերի եւ չէրքէզնիների հետ, որոնց բերած ամէն մէկ հային վճարում են մէկ սպի:

Այդպիսով ազատում են բաղձահազար հայ խլեակները:

Այս անժողանալի հերոսները, իրենց փոքրաթիւ ուժերով, երկար ժամանակ պահեցին այդ հեռաւոր ճակատը, հնարաւորութիւն տալով Հայ զինուորական իշխանութեանց նոր բանակներ կազմել, փոխարինելու համար ուստի քայքայուած եւ փախչող բանակին: Անկարելի է երկու խօսքով տալ սպայ Գրիգոր Ամիրեանի ծառայութիւնները Հայ բանակին եւ նրա միջոցով իբ Հայրենիքին: Դեռ առիթներ կը լինեն խօսելու այս Հայրենասէր զինուորականի մասին, որ անարդարօրէն մնացել է ստուերի մէջ:

Անդրանիկը եւ Սեպուհը լիապէս օգնուել են Ամիրեանի զինուորական կարողութիւնից եւ փորձառութիւնից:

Գրիգոր Ամիրեան պատկանում է մեր զինուորական այն ընտիր դասին, առանց որի զօրավար Նազարբէկեանը կարենոր դործողութիւնների չէր սկընում: Յիշենք ո՞մանք այդ ընտիրներից.— Գ. Ամիրեան, Մկրտչեան, Լազեան, Բաղդասարեան, Գնդուհի եւ Իշխանեան: Վերջինս ուսուական բանակից, իսկ միւսները տաճկական բանակից խոյս տուած ։

1918-ին երբ թուրքերը ընդունեցին մեր պետութեան փաստացի գոյութիւնը եւ Հարկ էր նրանց հետ բանակելի, մեր ազգային հերոսներից ո՞մանց ներկայութիւնը Հայաստանում թուրքերի համար աչքի փուշ էր: Կարծեմ թուրքերը պահանջում էին ո՞մանց յանձնումը իրրեւ «Ջարդարարներ»:

Ուստի, Անդրանիկը իր կամաւորներով անդափորւում է Լարսաղ, իսկ Սեպուհը, Մուրատը եւ Ամիրեանը անգնում են Հիււս. Կովկաս: Սրանց միանում է նաեւ մեր համակրիչի բժ. Պաթանասեան, որի նուիրումը եւ զոհարարութիւնը ծանօթ է: Շուտով, սակայն, վտանգւում մեր զիւմաւոր քաջարութիւնը ծան.թ է: Շուտով, սակայն, վտանգւում մեր զիւմաւոր քաջարեայներին չըմանր, Ռուս թողաքացիական կռիւների պատճառով: Գաղափարի եւ զէնքի այս անբաժանելիները ստիպուած բաժանոււմ են: Մուրատը մեկնում է Բազու. ուր առաջւոր գիրքերում ընկնում է հերոսաբար: Գարծեմ Սեպուհն ու բժ. Պաթանասեանը, Վրաստանի վրայով, անցնում են արտասահման, իսկ Գրիգոր Ամիրեանը, ենթադրելով որ Սեւ Մովսէ Նովորոսէյի նաւահանգիստից աւելի դիւրին է Պոլիս անցնելը, ինքզինք դնում է այդ քաղաքում, որին Հանդիպեցի 1919-ի ամառը:

Իմ պատմութիւնն էլ երկար է եւ արկածալի: Միայն համառօտակի առեմ, որ վրաց կառավարութիւնը ուզում էր ինձ ձերբակալել Մուխոմէի մէջ, ուր գնացել էի ազգային առաքելութեամբ: Գաղափարական մի ազնիւ հակառակորդ, Թ. Աւգայրէկեան, որ անդամ էր վրաց Սոցեալ Դեմոկրատ կուսակցութեան եւ մե՛ծ հեղինակութիւն ունէր կառավարական շրջանակներում, անձամբ յուր տուաւ ինձ եւ դիւրացրեց իմ անմիջական վրիճարար դէպի Նովորոսէյի, որ Դեմոկրատիան ապահով դօտի էր:

— Չե՛մ ուզում, որ քեզ ձերբակալեն, տասց նա, առանց անդրադառնալու մեր գաղափարական պայքարներին, որոնք, շատ յաճախ, Հրապարակային հոլոթների ժամանակ, հասնում էին անձնական վիրաւորանքների:

Անձամբ ինձ առաջնորդեց դէպի նաւը եւ սոցասեց ժինչեւ մեկնումի պահը: Ու եամբոյակից վուր իմաւ միայն այն ատեն, երբ այլեւս վստահ էր իմ ապահովութեան: Ողջացուրեցի՞նք սիրալիր եւ շո՞ռացաւ վերջին անգամ կրկնել..

— Դեռ երիտասարդ ես եւ անփորձ, մի քիչ գոռոյ պէտք է լինել: Դ 1908ի այսոց, այստեղ Հարկ կը համարեմ պատմել մե միջադէպ: Աւգայրէկեան երկու կորայրները վրաց Սոցիալ, Դեմոկրատ պետական կուսակցութեան անդամ լինելով եւ առաւելայայտ շիւում ունենալով վրա-

ցինքրի հետ, երգուեալ հակառակորդներ էին մեր կուսակցութեան եւ նորաստեղծ Հայաստանի վարած քաղաքականութեան:

Իմ ազատարարը աւագ եղբայրն էր, որ Սուխումի մէջ ունէր գրավաճառի կոկիկ խանութ: Փոքր եղբայրը, հայ-լրացական պատերազմից յետոյ, երեւի հոգեփոխուելով, անմիջապէս եկաւ Հայաստան եւ մեր կառավարութիւնը նրան նշանակեց Համագործակցականի (Կոպերատիւ) վարիչ, որ իր պարտականութիւնը կատարում էր ողբերգութեամբ եւ նուիրումով: Երգուեալ Հակառակորդ լինելով մեզ, սակայն այս երկու եղբայրները համաւաւոր էին իրենց պարկեշտութեամբ եւ Հայրենասիրութեամբ:

Եւ մեր պետական շրջանակները ամէն ջանք թափում էին, որ Աւստալէկեանները պէս մարդիկ շատ գան եւ շուտ գան Հայաստան եւ աշխատին իրենց հայրենիքում:

Եւ ահա մի օր, վիճարանութեան փամանակ, յայտնի խմբապետ Համագասւպը ապտակում է այս հիանալի երիտասարդին: Ներկաները պախարակելի կը գտնեն հերոսի ընթացը, շնորհալով նաեւ իրենց ջերմ համակրանքը արտայայտել Աւստալէկեանին: Սակայն հարցը դրանով չի փակուում: Պետական կուսակցութեան բարձրագոյն մարմինը վճռապէս թելադրում է Համագասւպին, որ անձամբ եւ մամուլի միջոցով հրապարակով ներողութիւն խնդրի երիտասարդից, պախարակելով իր ազեղ արարքը: Այլպէս էլ եղաւ եւ բոլորս ուրախացանք:

Յաջորդ օրը ես նովորուէյսկ հասոյ յապաղումով, վայելելուց յետոյ Սեւ Մովսէս կատարի փոթորիկներից մէկը: Ազատ էի բայց անճար: Գրպանս դատարկէր եւ շատ անհրաժեշտ իրեր մոռացել էի վերցնել: Անծանօթ էի քաղաքին եւ փոքրաթիւ Հայ դպրութիւն: Չունէի նաեւ որեւէ հասցէ:

Ուստի մտածկոտ քայլերս ուղղեցի դէպի ծովափնեայ հանրային պարտէզը, ուր հեռու եւ մեկուսի նստարանի վրայ սեռայ մի դինուորական: Անտարբերութիւն կեղծելով, աւելի մօտեցայ անծանօթին: Ռուսական դինուորական տարազով եւ դիտարկով, թիկնեղ եւ վայելուչ մի երիտասարդ էր. առնուազն մի զօրավար, մտածում էի: Պոնապարթեան երկարածիտ մոյկերը վկայում էին, որ քանակներ է վարել եւ ճակատամարտներ է տեսել: Երեւում էր, որ ծանր մտահոգութիւններ ունէր, որովհետեւ դինուորականի իր հպարտ գլուխը հակած էր մայր երկրին եւ դէմքը կիսով չափ միայն յայտնի էր: Անշարժ էր գրեթէ: Ոտքն աղմուկով մօտեցայ եւ դինուորականը յանկարծ իր գլուխը բարձրացրեց: Մեր ակնարկները հանգրիպեցին իրար եւ բացազանչութիւններով եւ յուզումով գրկառուեցինք:

Գրիգոր Ամիրեանն էր:

Պատմեցինք իրար մեր արկածները եւ շուտով գտանք մեր ուրախութիւնը: Տեղեկանալով իմ կացութեան, անմիջապէս վճռեց.

— Հոս մնալու պէտք չունիս: Միասին Պոլիս կ'երթանք, ուր ապրում են փեսաս եւ ջոյրս իրենց ձաղուկներով: Փամանակ մը հոն կը մնանք եւ յարմար առիթով մը նորէն կը վերադառնանք Հայաստան:

Գրիգորի առաջարկը երկնքից սպասուած մի փրկութիւն էր ինձ համար:

— Ուրեմն, գործի՛ անցնինք, — ասացի ես:

— Արդէն գործի վրայ եմ, խնդաց Գրիգորը:

Ու բացատրեց իր ձախողութիւնը: Նախկին պատերազմիկների հայրենադարձի կարեւոր գործը յոյն հիւպատոսին վստահուած լինելով, Գրիգորը գիմում կը կատարէ խնդրելով, որ իրեն արտօնեն ճամբորդելու այն միակ նա-

ւով, արդէն պատրաստ էր Պոլիս մեկնելու: Հիւպատոսը մերժու-
մը պատճառարանելով ճամբորդները խճողումը: Այդ նաւը պիտի մեկ-
նէր մեր Հանդիպման օրը, երեկոյան: Իսկ ուրիշ նաւերի սպասելը, նշա-
նակում էր թշուառութեան մատնութիւլ, որովհետեւ յաջորդ նաւերը կամ պա-
տահապետն եւ կամ՝ ամիսների ուշացումով կարող էին հանդիպել Նովորո-
տէյսկ: Եւ ահա մեր Գրիգորը եկել էր խնդրելու միջնորդութիւնը յոյն Հիւ-
պատոսի տիկնոջ, որ թեմերս կը խաղար պարտէղին կից մարզադատում:

Գարնան Հիւանալի եղանակ էր, ամէն բան սէր եւ ժպիտ էր կարծես: Մօ-
տեցանք մարդադաշտի դրան, կազմելով նաեւ տիկնոջ ներկայանալու եւ խօ-
սելու մեր ծրագիրը:

Թէնիսի խաղը թաւալում էր խանդով եւ եռանդով, որի մէջ Հիւպատոսի
կինը յաճախ ծափեր էր խլում փոքրաթիւ հանդիսականներից: Յունական
տիպի գեղեցկուհի էր մեր ապագայ բարեխօսը, բարձրահասակ, վայելչա-
կազմ եւ նազելի: Վերջապէս խաղը վերջացաւ եւ նրան դիմաւորեցինք ասպե-
տական կեցուածքով եւ խորին գլուխ տալով: Ժպտաղէմ առաւ մեր բարեւը
եւ մի պահ դիտեց մեզ:

Նախ՝ ուռուեղնով ներկայացրի Գրիգորին իբրեւ Հայ կամաւորական բա-
նակի բարձրատիճան սպայ, իսկ իմ մասին վկայեցի, որ Հայ գրող եմ եւ
գինուորական թղթակից: Եւ ուռուների հետ միասին կուռել ենք թուրքերի
դէմ Հայաստանի բոլոր ճակատներում: Ու հիմա կ'ուզենք Պոլիս վերադառ-
նալ մեր կորուած, սպաննուած կամ դերի հարազատները փնտնելու: Եթէ
այս նաւով չմեկնինք, թշուառութեան պիտի մատնուինք:

Ուստի խնդրում ենք ձեր բարեխօսութիւնը պարն Հիւպատոսին, որ Հա-
նութիւնն ունենայ մեզ այս նաւով իսկ ճամբու գնելու:

— Լա՛ւ, հետեւեցէք ինձ — ասաց ազնիւ տիկինը, — կարծեմ ամուսինս նա-
ւի վրայ է, շատ կարգադրութիւններ ունի:

Գեղեցիկ կալանաւորը մէջտեղ առինք եւ դիմեցինք գէպի նաւահանպիս-
տը, որ մօտ էր եւ ուր կանգնած էր մեր սերտգնների նաւը, որ տենդադին ա-
ծուխ էր բեռնցում:

Գրիգորը, պոլսական հիւանալի թուրքերէնով, լրացրեց պակասը, յիշա-
տակելով Հայերիս տառապանքը, զոհարբութիւնը եւ նուիրումը Համաձայ-
նականների դատին:

— Գիտե՛մ, գիտե՛մ, — շարունակ կրկնում էր տիկինը:

Վերջապէս, բարտան ունեցանք Հիւպատոսին դտնելու: Ջողոտ, կորովի եւ
տարիքոտ մէկն էր: Կինը, ժպտաղէմ եւ ծէքծէքումներով, գրկից մարդուն:

Եւ մենք ականատես եղանք յունարէն ընդունով մի վէճի, որ ճակատադրա-
կան նշանակութիւն ունէր մեզ Համար: Կինը խօսում էր քնքշօրէն եւ ցած ձայ-
նով, իսկ մարդը Հեռուհեռէ բարձրաձայն եւ ցասկոտ: Նրա ձեռքի խիտական
շարժումից արդէն կուսում էինք մեր դժբախտութիւնը: Եբբեմն դիտում էի
Գրիգորին, որ սովորականից աւելի էր կրճում իր շրթունքները:

Պաշարը կատաղի էր, բայց ես անխռով էի, քրովհետեւ Հաւատացած էի,
որ ի վերջոյ, ճակատամարտը պիտի կորսնցնէ չորցած ծերուկը:

Այդպէս էլ եղաւ: Թեւանցուկ իր մարզուն, որ գրեթէ ակամայ կը քալէր,
յոյն գեղեցկուհին ձեռքի նշանով հասկացրեց, որ Հետեւինք իրեն: Եւ ուղղակի-
մօտենալով ամսասվաճատի պատահանին սպաց:

— Երկու տոմսակ:

Ու սկսեցինք խտունել մեր պարապ գրպանները եւ հազիւ կարողացանք վճարել փոխարժէքը: Բարեբախտաբար աժան էին:

Հիւպատոսը յանձնելով տոմսակները, սաստեց.

— Այս տոմսերով միայն բացօթեայ կարող էք ճամբորդել:

Սորին յարգանքով շնորհակալութիւն յայտնեցինք: Գնդուհին շատ զոհ էր, աւանց նկատելու, որ մեր սրտերից շատ բան տարաւ իր հետ:

Անտահման ուրախ էինք նաեւ մենք: Գրեթէ անօթի կուշտեր էինք: Հաս ղիւ կարողացանք մեր ունեցած դրամով հաց, պանիր եւ մի քիչ երշիկ գնել:

Բարձրացանք նաւը ճիշտ ժամին եւ սուլիշի վերջին ազգանշանով բեռնատարը ինքզինք յանձնեց Սեւ Մովսէլ արիւնքներին: Երկու օր յետոյ հասանք Պոլիս, ուր այլեւս ամէն իշխանութիւն եւ կարգադրութիւն մնաց Գրիգորին:

Հակառակ Գրիգորի շլացուցիչ բացատրութիւններէն, լքնութեան գեղեցկութիւնները անարդուած տեսայ այս տեղ: Աղտեղութիւն, զարշահուածութիւն, եւրոպական եւ ասիական խաժամուած, Փէս եւ մղկիթ:

— Ա՞յս է մեր հուշակաւոր դիցուհին...:

— Առաջին տպաւորութիւններդ պիտի անցնին, — պատասխանեց բարեկամս: — Պոլիսը միշտ գեղեցիկ է:

Բիւզանդացիներին եւ հռովմէացիներին մի լաւ հայհոյեցի: Ու նաւը նստելով անցանք Սկիւտարը, հայ բանաստեղծների աշխարհը, ուր ապրում էին Գրիգորի հարազատները:

ՄԱՐՏԻԿԵԱՆ ԸՆՏԱՆԻՔԸ

Անզգալի վերելքով բարձրանում ենք դէպի վեր, որտեղից փայտաշէն տները, շարք առ շարք, երկարում են աւելի հեռուներ: Պոլսի համայնապատկերը աւելի գեղեցիկ է այս բարձրութիւնից: Գրեթէ Հայկական մի աշխարհ է, ուր հեշտօրէն կարելի է գտնել ցանկացած որեւէ խրճիթ:

Գտանք փայտաշէն տունը Մակար Աղայի, որ Մարտիկեան ընտանիքի հայրն էր: Մանգուղներով բարձրացանք եւ ընդունարանի դրանը մեզ դիմաւորեց բարձրահասակ, վայլակազմ, երկնագոյն աչքերով եւ շէկ մազերով մի կին, որ յուղիչ բացազանութեամբ ընկաւ Գրիգորի գիրկը: Քոյրը եւ եղբայրը կարօտագին համարուեցին ու լացին: Գրիգորի քոյրը յուզումից դողում էր դեռ, երբ ձեռքը մեկնեց ինձ:

— Հայաստանի եղբայր է՝ սաւա Գրիգորը, ինձ ներկայացնելով:

Ալա Տիկ Հայկանոյը, գեռ հեկեկալով, կանչեց.

— Պա՛յծառ, Ալէ՛մ, մօրեղբայրնիդ եկաւ:

Միւս սենեակից երկու աղջնակները ներս փրթան եւ փաթթուեցին մեզ: Պայծառը՝ կարմրաթշիկ եւ հաստիկ, իսկ Ալէմը նրբակազմ եւ սպիտակամորթ:

Մօրը հետ ուրախութիւնից, լաց էին լինում նաեւ այս երկու հրեշտակները, երբ Գրիգորը մեղմութեամբ սաստեց.

— Լա՛ւ, հասկցանք, հերի՛ք է սուզ ու շիվան. անօթի ենք:

Եւ հայկական օճախի օրհնութիւնը իջաւ մեզ վրայ, հազար բարեգնեցրով:

— Այս ի՞նչ է, Գրիգոր, կատակեցի ես, քեզանից սկսեալ մինչեւ փոքրիկները հայկական բան մը չունէք վրանիդ, բոլորդ էլ լիկահեր եւ կապուտաշեայ էք:

— Դեօ ի՞նչ տեսար որ... փեսաս, Մակար Աղան, ուղղակի առաւ մըն է,

իսկ ձորճը ուսուսական լակոտ մը, պահած ենք Հին Արմէններու իսկական տի պը, ձեզ նման այլեւարած չենք... :

Յետոյ Տիկ. Հայկանոյը բացատրեց, որ Մակար Աղան դուրսն է իր առեւարական փորձիկ գործերով, իսկ երկու մանչերը, Արշակն ու ձորճը, թէ՛ կը սորվին եւ թէ՛ զբաղուսներ ունին Բերա, եւ առն կը վերադառնան երկոյսան :

— Լա՛ւ ենք եւ Հանգիստ կ'ապրինք, — վերջացրեց իր խօսքը, — իսկ եղբորս եւ ձեռ զարով Աստուած մեզ աւելի երջանակացուց : Կէտ օր էր արդէն :

Փայտեաց սանդուղի վրայ լսելի եղաւ դանդաղ եւ Հատ Հատ մի ոտնաձայն, որ բնորոշում էր եկողի յոգնութիւնը :

— Հայրիկն է, ասաց Տիկ. Հայկանոյը :

Պայծառն ու Ալէ՛մը իսկոյն վազեցին սանդուղի գլուխը, աւետելով .

— Հայրիկ, մօրեղբայրը եկած է :

Ողջագորուեցին Գրիգորի Հետ եւ ժպտաղէմ ձեռք տուաւ ինձ :

— Բարբ' էք եկեր, Հա՛ղար բարով, ասաց Մակար Աղան, — յոգնութիւններդ անցած ըլլայ :

Իրա՛ւ որ մեր առջև կանգնած էր Փէսով մի ոռու, միջահասակ, ժպտաղէմ, Հանդարտաբարոյ բայց կենդանի աչքերով :

— Է՛հ, ի՞նչ լուրեր մեր Հայաստանէն : Հա՛րկաւ աղէկ է :

Աստուած մեր ձայնը լսեց. վերջապէս Հայրենիք մը ունեցանք... Գէշ աղէկ մերն է : Շուները ձայնընին քաշած են, բայց վերջը նայինք :

Սակաւախօս Գրիգորը միխթարական մի քանի տեղեկութիւններ տուաւ, յարգած լինելու իր փեսան :

Լաւ ճաշից յետոյ յոգնութիւնը եւ քնատութիւնը մեզ նեղում էին :

Այդ նկատելով Մակար Աղան անմիջապէս քարեց .

— Քիչ մը Հանգստացէ՛ք : Երեկոյսան, երբ տղաքը դան, երկար խօսելու ատեն կ'ունենանք :

Դիվանների վրայ, մաքուր անկողիններում, ես ու Գրիգորը անմիջապէս քնեցինք, եւ զարթնեցինք միայն մայրամուտին, երբ Արշակն ու ձորճը արդէն վերադարձել էին :

Սրանց գարով տունը ուղղակի Հարսանիքի վերածուեցաւ : Ձերմ եւ գորովայլից Համբուրեցինք եւ գգուեցինք Երկուսին էէ, որոնք մեզանից բաժանուեցին միայն ուշ գիշերին եւ ծնողաց ստիպման տակ :

Արշակը, մեծ եղբայր, խաղաղասէր եւ Հեզահամբոյր մէկն էր : Սիրում էր լսել քան թէ խօսիլ : Իսկ ձորճը Արշակի Հակապատկերն էր, վառվռուն, անՀանդարտ, յանդուգն, բայց եւ զգայուն եւ դադափարապաշտ : Ինքը ղեռ պատանի, Հազիւ 16-17 տարեկան, մեր վրայ կը գուրգուրար իբր խնամքի կարօտ երախաների : Վերին աստիճանի Հաճոյակատար, Հաճոյախօս եւ անՀանդուրժելի Հարցասէր էր :

Առաջին օրերին ձորճի այս յատկութիւնները վերագրում էի նրա պատանեկան սպեկտրութեան : Բայց ՀեազՀետէ նշմարեցի, որ նա ուշիմ է նաեւ, զրական եւ վճճական : Ինչ որ խօսում է եւ անում, բխում են նրա Հոգեկան կոռուցումօքից :

Շուտով ձորճը սիրելի դարձաւ ինձ, թէեւ անեցիները նրա խանդավառութեան շատ կարեւորութիւն չէին տալիս : ձորճը ճշմարտապէս լեցնում էր մեր կեանքը երբ ներկայ էր, եւ պարագութիւն էր թողնում իր ետեւ երբ Բերա կ'երթար ուսանելու կամ գործելու : Ամէն օր առն էր վերադառնում նուէրներով, — ընտիր ծխախոտ, նոր ելած պտուղներ, թարմ ձուկ եւ այլն :

Եւ զարմանալի կերպով գիտէր թէ ես ու Գրիգորը ի՞նչ բաներից կ'ախորժինք եւ կամ Հաճոյք կը զգանք:

Բնական է, Գրիգորը ինձ չափ, թերեւս աւելի էր սիրում Ճորճին, բայց խիստ զգոյշ էր նրան հրահրելուց եւ երես տալուց: Իսկ ես ուղղակի շփացնում էի նրան, առանց ի նկատի ունենալու մանկավարժական տարրական կանոնները:

Այս բանը երբեք Հաճելի չէր Գրիգորին, եւ այս առթիւ նրա պիտոզու-թիւնները անպակաս էին:

Մի օր Գրիգորը, լաւ տրամադրուած, Հարցրեց, Ճորճին ակնարկելով.

— Ի՞նչ է կարծիքդ այս լակոտի մասին:

— Գուշակել նրա ապագան անկարելի է բայց մի բան պարզ է, որ ոչսպասումն է մէջ թաղնուած է մի անյայտ մեծութիւն:

Առանց պատասխանի Գրիգորը խորասուզուեց ընթերցանութեան մէջ:

Ամիւրանք անյազ ընթերցող է: Նրան տուէք գիրք ու թերթ, Հաց ու պանիր եւ մի բաժակ ջուր, եւ սպասեցէք, որ դուրսը վեր բարձրացնի: Միայն հրդեհ կամ ուղղական ահազանգ կարող են նրան սթափեցնել:

Մակար Աղան, Հայերէն եւ Թուրքերէն լրագրիւնների տրցակը նետում էր տուն եւ յետոյ էր գնում գործի: Գրիգորը ուշադիր կարդում էր Թուրք թերթերը, որոնց կարեւոր խմբագրականները եւ լուրջ յօդուածները յաճախ թարգմանում էր ինձ, ցոյց տալու Համար Թուրքերի նրբամտութիւնը եւ քաղաքական Հարցերին մօտենալուն եւ վերլուծելու ճկնութիւնը, որոնք յաճախ ինձ զարմանք էին պատճառում:

Մարտիկեան ընտանիքը մեզ Համար արքայութիւն էր, Հայաստանի դըրկանքներից յետոյ: Ոչինչ չէր պակասում մեզ երջանիկ լինելու, — սէր, յարգանք, Հարազատութիւն եւ խնամք:

Մէկ շաբաթ յետոյ իջանք եւրոպական ավեր եւ առաջին այցելութիւնը տուինք «Ճակատամարտ»ին: Մանօթացանք մեր տաղանդաւոր խմբագիր Ծաւարը Միսաքեանին, որ, աւա՛ղ, մեզ Հետ չէ այլեւ: Տեսանք նաեւ շա՛տ ծանօթ դէմքեր կովկասից: «Ճակատամարտ»ը դիւսաւոր կեդրոնավայրն էր առաջուր Հայ մտաւորականութեան:

Յաջորդ օրը «Ճակատամարտ»ի մէջ կարդացինք իմ ժամանան լուրը, ուր ասուած էր թէ պիտի աշխատակցիմ թերթին:

Կարելի չէր մերժել Ծաւարին: Ու ես Պոլսում գրեցի իմ այլաբանական վիպակներից մէկ, որ լոյս տեսաւ «Ճակատամարտ»ի մի քանի Համարներում իրրեւ թերթօս, «Պատերազմի Մահը» վերնագրով: Ստորագրեցի նաեւ մի քանի ուրիշ պատմուածքներ:

Երջանիկ օրեր էին: Թուրքիան պարտուած, Հայաստանը Աղան եւ Անկախ. որի մասին դրուած լուրերը կարդացուած էին յափշտակութեամբ, որպիսի Հետաքրքրութեամբ կարդացուած էին Թուրք դիւսաւոր շարդարարներից մէկի, Ծօզդաւրի ջարդարար Քեմալի յանդալից դատավարութեան մանրամասնութիւնները: Քեմալը կախողան բարձրացաւ Պոլսոյ ամենամեծ հրապարակում, որի թաղումը մեծ ցոյցի վերածուեց եւ ջարդարարը Հոչակուեց ասղալային Հերոս:

Այս խնդիրներով մեծապէս շահագրգռուած էր պատանի Ճորճը, որ վերադառնում էր տուն նուէրներով եւ թարմ լուրերով:

Նրա պատանեկան վառ երեւակայութեան մէջ երկու ցցուն հակադասուկերն էր կային — Թուրքիան ճզմուած եւ Հայաստանը ոտքի ելած:

Եւ ահա՛ Ճորճի անկերլանալի հարցումները մեր յաղթանակների եւ Թուր-

քերի պարտութեան մասին :

— Նախ՝ գիմում էր մօրեղբօրը իր հետաքրքրութեան գոհացում տալու համար :

Գրիգոր Ամիրեանը, որ հիանալի պատմիչ է ուղիական գործողութիւններին, երբ ունկնդիրները մեծեր են, երբեք չուզեց գոհացում տալ ձորճին :

Ձորճի այն հարցումներին թէ մեր եւ թրքական բանակները ի՞նչպէս կոռուցին, եւ թէ մենք ի՞նչպէս յայթեցինք, Գրիգորը պատասխանում էր չափազանց ժլատ :

— Ետզակրատելու պէտք չկայ. Հայաստանի մէջ մենք եւ թուրքերը կոռուցինք. թուրքերը շատ էին, իսկ մենք՝ քիչ : Կոռուները տեւեցին երեք օր ու դիշեր : Մենք յայթեցինք : Եղածը այ՛ն է :

Նիսայ կարելի՞ էր հայրենաւէր պատանիին խաբել, մեր հերոսամարտերը այսքա՞ն կարճ ու կարճակ պատմելով :

Եւ ինձ էր մտում պատմել, նոյնիսկ յետին մանրամասնութիւններով Հայաստանի հերոսական դրուագները, որոնք շարունակելի էին միշտ : Երբ վերջացրի մասնակի հերոսամարտերի շարքը, մի օր սկսեցի ներկայացնել Արարատեան Գուշի եւ Ղարաքիլիսայի բախտորոշ ճակատամարտերը :

Պատանի ձորճը լսում էր արտակարգ փափշտակութեամբ, մերթ ընդ մերթ ինձ ընդմիջելով տարօրինակ հարցումներով :

— Սահկ, կոկորդ կոկորդի՞ կուզայիք թուրքերուն հետ :

— Նախ՝ սուիկով կը հնձէիք անոնց շարքերը, իսկ հարկ եղած պարագային՝ կոկորդ-կոկորդի եւ օճիկ-օճիկ կուզայիք :

— Թուրքերը ի՞նչ կը պոսային :

— Ալլա՛հ դալլա՛հ կանձելով գետին կը տապալուէին եւ կամ կը փտուէին լեղակապտա :

— Օ՛րս...

Եւտոյ մեր այրումին հետապնդում էր փախչողներին, շարունակում էի Եսպարանց Կաշիւր սրով մաքրելու համար :

— Ա՛խ, ես ինչո՞ւ հոն չէի, յանկարծ բացաղանչեց ձորճը, բռունցքները ճօճելով օդին մէջ :

— Բա՛ւ է, զե՛վղէկ, ալ քնելու տանն է, վերջ տուէք, ուստեց Գրիգորը : Իրօ՛ք, ուչ էր. արտաբառուեցինք քնելու :

Երբ մենակ մնացինք, Գրիգորը լուաց թափեց նա՛եւ ինձ :

— Այրուհետեւ պէտք չէ՛ կարեւորութիւն տայ այս շտապիտ լակոտին : Մա՛րդ Աստուծոյ, չե՞ս նկատեր, որ այս լոկոտը ընդունակ է ամէն բանի : Վաստ՛հ կարիք, որ օք մը փորձանք պիտի բերէ իր ծնողաց եւ մեր գլխուն : Բի՛չ մը չափուորէ՛ վիպասանական երեսակայութիւնդ :

— Ին՛նի՞ ես. հակաճառեցի, խեղճ պատանին ի՞նչ փորձանք կարող է բերել մեր գլխուն :

Ամիւսներ էին անցել ու մեր արքայական կեանքը ընթանում էր նոյն յարգանքի, զուրգուրանքի եւ ջերմութեան մէջ : Մակար Ալայի օճախի քաղցրութիւնը եւ հարազատութիւնը զզում էինք լիովին : Սակայն Հայաստանի կարօպը սիրուց Կրպի զառնալ, օրից օր լայնանալով եւ խորանալով :

Հայրենարարձութիւնը այլեւս անգիմադրելի էր իմ մէջ : Տարբեր անուսնով եւ յարմար առիթով ես վերագարձայ հայրենիք, Մարտիկեան ընտանիքին թողնելով իմ արցունքները եւ նրանցից ինձ հետ բերելով անմոռանալի յիշատակները :

Շուտով Հայաստան եկաւ անեւ Գրիգոր Ամիրեանը, որ անմիջապէս միա-

ցաւ մեր բանակին: Այն ժամանակ մենք Երևանում կազմել էինք Հայաստանի Գրոյնների Ընկերութիւնը, որ ծանօթ էր Գորական Պանդոկ: անուով, իմ նախազանութեան տակ:

Հայ-թրքական պատերազմի վախերը դառնում էին իրական: Տենդազին ցորակը կար Հայաստանում: Տարիքի բերումով զօրակոչի ենթարկուցի եւ Գորական Պանդոկի նախազանութիւնը յանձնելով Ստեփան Զօրեանին եւ Եղիշէ Չարենցին, միացայ բանակին, ուր եւ դուայ իմ սիրելի բարեկամ եւ եղբայր Գրիգոր Ամիրեանին: Նորից միասին էինք Գորգ զօրագունդի մէջ, որի հրամանատարը Սեպուհն էր եւ գունդի շարժական մասի պետը՝ Գրիգոր Ամիրեան:

Հայ-թրքական պատերազմը սկսուել էր արդէն: Մեր գունդին յանձնուեց ընդհանուր ճակատի աջ թեւը, Մերտինկի շրջանում (Արտասան): Ամբողջ կռիւնների ընթացքում մէկ թիզ հող չզիջեցինք թշնամուն:

Թուրքերը հասել էին Կարսի տակ: Սպարապետ Նազարբէկեան մեր սպայակոյտին ծանօթացնում էր ծածկադրով, որ Հայկական բանակը կազմ ու պարաստ է ընդհանուր հակաշարժկաման, 1920 թ. Հոկտ. 14-ին: Մեր ուրախութիւնը չափ ու սահման չունէր:

Բայց մեր հրճուանքը երկար չտևեց: Կարսը վտանգի տակ էր եւ հրամանատարութիւն հրամանագրեց, որ նահանջենք ստանց Կարսը մտնելու:

Բերդաքաղաքը արդէն ընկած էր...

Երկար է մեր ողիսականը եւ ծանօթ են հետագայ աղէտները: Հասնելով Ղարաքիլիսէ տեղեկացանք, որ ձորձ Մարտիկեանը գերի ընկած է Մարիզամիշի մէջ: Բաւական չէր մեր ազգային մեծ աղէտը որ արդէն խոցել էր մեր սիրտը եւ ահա ձորձի նահատակութիւնը գալիս էր արցունքներ քամելու մեր աչքերէն:

Հայաստանը խորհրդայնեցաւ, որին յաջորդեց Փետրուարեան ապստամբութիւնը: Գրիգորն ու ես իրար կորսնցրինք դարձնալ:

Նահանջ Բիւրոցի հետ ես անցայ Պարսկաստան, Եգիպտոս եւ ապա Զեխոսլոյվաքիա ուսանելու: Բախտը ինձ նետեց մինչեւ Հարաւ. Ամերիկա: Տասնեակ տարիներ անցան, առանց լուր ունենալու ո՛չ Գրիգորի եւ ո՛չ էլ Մարտիկեան գերդաստանի որեւէ անդամի մասին:

Եւ ահա մի օր Գրիգոր Ամիրեանը Ռուսաստանի ինձ գրեց, որ Հիւս. Ամերիկայում հռչակ հանած ձորձ Մարտիկեանը Սարիզամիշի մէջ գերի ընկած եւ նահատակուած մեր սիրելի ձորձն է: Այլեւս կարելի է երեւակայել իմ ապշութիւնն ու զարմանքը:

Այս հերոս պատանիի հէքեաթը այլեւս լուծուած էր ինձ համար:

Սարիզամիշի կալանաւորը, չքեղ յարութեամբ՝ ահա մեզ մօտ է, տիրացած համաշխարհային համբաւի իբրեւ զրոյ, մարդասէր, բարեգործ եւ մանաւանդ ջերմ հայրենասէր:

Երանի թէ հայ ժողովուրդը այսպիսի «փորձանքներ» չա՛տ բերի իր գըլխին: Ու երանի թէ հայ բոլոր պատանիները ձորձի պէս մէկ մէկ «փորձանքներ» լինեն:

Ս Կ Ա Ո Ւ Տ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Ջ Ր Ա Մ Ո Յ Ն.-

Ամէն մէկ սկառուտէ լողալ գիտնալ կը պահանջուի, բայց պարզ լողալը չի բաւեր, պէտք է քաջ լողալ գիտնալ, որպէսզի կարենան ջրամոյն եղող անձերը ազատել:

Լողալու հետ պէտք է գիտնալ նաեւ այն պատճառները, որոնք առիթ կու տան շատ մը մարդոց խեղդուելուն: Շատ պաղ ջուրի մէջ եւ երկար ժամանակ լողալէն մարդ կը յոգնի: Նաւակի մը մէջ տեղ փոխելը շատ սխալ բան մըն է, որ կրնայ նաւակին շրջելուն պատճառ ըլլալ, պէտք չէ նաեւ նաւակին մէջ նստած օբորուիլ:

Ջրամոյն եղող անձի մը առաջին բնազդը զինքը ազատող անձին ամուր մը փարիչն է ինչ որ սարսափելի է ու նոյնիսկ պատճառ կ'ըլլայ ազատարարին մահուան: Լաւ լուզորդին անմիջական մտածումը պէտք է ըլլայ խեղդուելու վրայ եղող անձին ճիրաններէն ազատ մնալ: Ազատարարը ետեւը պէտք է անցնի եւ ջրամոյնին դատարկներէն բռնելով վեր քաշէ, առանց թոյլադրելու անոր, որ իրեն կառչի: Կտրելի է նմանապէս վզէն բռնելով վեր Հանել:

ԱՐՈՒԵՍԱԿԱՆ ՇՆՉԱՌՈՒԹԻԻՆ.-

Արուեստական շնչառութիւնը օգտակար արդիւնքներ կուտայ թէ՛ ջրամոյն եղող եւ թէ՛ կազային կամ այլ պաճառներով խեղդամահ ըլլալու վտանգին ենթարկուող անձերուն:

Փրոֆ. Շաֆէրի դրուսթիւնը լաւագոյնն է խեղդամահ եղողի մը շնչառութիւնը վերակենդանացնելու, քանզի անհատ մը առանձին կարող է ժամ մը աշխատիլ: Անոր դրուսթեամբ ենթական շատ օղ կը ստանայ, լեարդ վնասելու վախը չկայ եւ ոչ ալ լեզուն դուրս քաշելու ստիպումը:

Ննթական պառկեցո՛ւր երեսն ի վար դետնի վրայ, ձեռքերը երկարէ՛ զլիւէն վեր: Դէմքը ձախ կողմի վրայ դարձուր եւ դատարկին վրայ թող Հանդչի: Այս եղանակով լեզուն դուրս պիտի իյնայ եւ ջուր սկսի Հստի բերնէն:

Ննթական ջուրը ծունկի գալով՝ երկու ձեռքով սկէ փոխն ի փոխ սեղմել եւ թողուլ կոնակի կողոսկրի վրայ: Շարունակէ՛ ասիկա վայրկեանը 12 անգամ ընելու արագութեամբ: Ասիկա պատճառ պիտի ըլլայ որ օղը թոքերէն ներս խուժէ եւ մահատանը անձը վերակենդանութեան նշաններ ցոյց տալ, բայց Հակառակ ստոր աշխատանքը պէտք չէ՛ դադարեցնել, մինչեւ որ ենթական շնչառութիւնը բոլորովին կանոնաւորուի:

Մեր արուեստական շնչառութեամբ ենթական վերստանայ իր գլխակցութիւնը՝ այն աստիճանի կարելի է գրգռազեղ տալ անոր: Վերջը Հագուստները Հագուեցնել, անկողին դնել եւ Հանդարտ ու տաք պահել պէտք է: Թոքատապը Հիւանդութիւն մըն է, որ թրջուած մարդոց կը յարձակի ընդհանրապէս, հետեւապէս ծոփը կամ գետը իյնողի մը շնչառութիւնը վերակենդանացընելէ անմիջապէս յետոյ, անոր թրջած Հագուստները Հանելով, չոր Հագուստներ Հագուեցնել եւ անկողին պառկեցնելու է զայն:

Ս Ա Բ Ի Լ .-

Սառող անձ մը պէտք է սրբոյ սեւեակ մը դնել եւ պաղ ջուրի մէջ թրջած լաթով մը լաւ մը սրբել զայն: Սենեակին օդը պէտք է աստիճանաբար տաք-ցընել, նոյնպէս լաթը թաթիսել հետզհետէ աւելի տաք ջուրի մէջը Անմիջապէս որ ենթական ի վիճակի է, գրգռագեղ խմցուր: Վտանգաւոր է սառող մէկը բաց կրակին շուջն քերտը եւ կամ քառք լուրանք ատնել տալը, անոր սթափիչէն առաջ, ինչ որ յայտնի է ըլլայ՝ երբ անոր մորթը կը սկսի տաքնալ, իր բնական գոյնը կը ստանայ եւ ընդհանուր վիճակին մէջ բարելաւում մը կը նշմարուի:



ԳԻՏԵԼԻՔ 6.— Հետեւեալ կերակուրներէն երկուքը եփել զիտնալ (ընտրութիւնը քննիչին թողուած է): Թռչուն մը փետրափել եւ եփել, հաց շաքել եւ եփել, ձուագեղ, բանջարեղէն կերակուր մը շամփուր (շիշ-էկպապ) մսեղէն կերակուր մը:

Սկառուական խտչալէ ու գործունէութենէ անտեղեակ սեւէ անձ՝ պիտի զարմանայ՝ երբ տեսնէ թէ՛ կերակուրի մը եփելու հմտութիւնը իրը պայման՝ կը ներկայացուի գիտելիքներու շարքին: Այսպիսիներու արտաբանութիւնը կրնայ արդարացի պատճառներէ յառաջ եկած ըլլալ. օրինակի համար՝ միջն-չեւ ցարդ ընդունուած սովորութիւններու կարգերուն եւ աւանդուած գիտութիւններու մէջ ոչ ոք հանդիպած է՝ 12-18 տարեկան պատանիներու կե-րակուր մը եփելու ո՛րեւէ պահանջը: Հետեւապէս երբ առաջին անգամ պարտապիւր պայման մը կը պատրաստուի անչափահաս տղոց, իրը անսովոր բան մը՝ զարմանք կը պատճառէ անշուշտ, բայց երբ քաջի տալեւ ունենանք իսկական սկառուր եւ իր վարած կեանքը, լեռներու լանջքին կամ անդամներուն՝ խորը, հեռու՝ քաղաքի հաճոյքներէն եւ փարթամ աւճոյ ուտելիքներէ, ինչ որ իրեն համար սահմանափակուած է քանի մը պարզ, բայց մաքուր ուտելիքներու մէջ, այն ատեն որոշապէս կրնանք ըմբռնել իսկական իմաստը սկառու-տի մը կերակուր եփելու ընդունակ ըլլալու պահանջքին, զոր դասած ենք տաղին կարգի սկառուներու գիտելիքներու շարքին:

Եթէ ակնարկ մը նկատուի պահանջուած կերակուրներու ցուցակին վրայ, պիտի տեսնուի որ՝ անոնք սովորական սննդեղէններ են, զորս հեշտութեամբ կարելի է ճարել, եւ օրոնք գրեթէ մշտական եւ ընդունուած ուտելիքներն են՝ բացօթեայ կեանքի հետեւող մարդոց: Որսի միւր, հաց եւ խորտիկը, ասոնք՝ անխուսափելի ուտելիքներն են սկառուտի եւ թնտառային կեանքի վարձ՝ ան-ձերու, իսկ ձուագեղ բանջարեղէնով եւ մսեղէնով խառն կերակուրներ երկ-րորդական կը դասուին եւ կարելի նկատել իրը ճոխութիւններ: Սկառուա-կան կեանքը հակառակ իր բացարձակ պարզութեան եւ ալյազան ուտելիքնե-րէ զրկումին, այնքան քաղցր եւ հաճոյալի է որ՝ ուտեստեղէններու՝ միօրին՝ նախութիւնը եւ տեսակի շարժութիւնը ոչինչով կը նոսաբեցնէ անոր հրապոյ-րը, եւ այլ է պատճառոց՝ որ սկառուական կեանքի մէջ ապրողը շատ աւելի երջանիկ կը զգայ իր պարզուկ կերակուրովը, քեզ մը հացովն ու որսի միտ-վը՝ քան ընտանական սեղանի շուրջ իւզուտ, ծանրահաս եւ դժուարամտուր ճոխ կերակուրներով, սնանող մը: Հեղինակաւոր անուանի բժիշկներ ազգուօրէն կը յանձնարարեն ծնողներուն՝ զոյնը ըլլալ պարարտ եւ իւզուտ կերակուրներ չտալու պատանեկութենէն չափահասութիւն թեւակոխող տղայոց: Եսառ մը տղայոց թուլամորթութեան եւ ջգային զրգիւններու իսկական պատճառը կե-

պատրաստութիւնը թեկնածու սկաուտներու կողմանէ կարելի է սորվիլ տուրակութենէրու պատրաստութիւնն ու այլազանութիւնն է՝ այնպէս որ՝ սկաուտական կազմակերպութեան գերը, նոյնիսկ այս որոշ կէտին վրայ, իր խիստ տեսչատելի նոյառակը ունի: Երբ դիտելիք վեցի մասին եր խօսինք, անհրաժեշտ է նաեւ սկաուտներու ուշադրութիւնը հրաւիրել երկրորդ կարգի 6 եւ 7 գիտելիքներու վրայ, որոնց առաջինը կը խօսի բաց օդին մէջ կրակ շինել եւ վառել, իսկ երկրորդը՝ սկաուտական ամանի մէջ միտ եւ գետնախնձոր եփել:

Ինչպէս կը տեսնուի այս երեք դիտելիքները իրարու լրացուցիչ մասեր կը կազմեն, նախ կրակ շինելով կը սկսի, յետոյ պարզ կերակուրի փորձ կը կատարուի, իսկ ամենէն վերջը բանջարեղէնով մօտառն կերակուր մը կը պահանջուի: Այնպէս որ՝ երբ սկաուտը երկրորդ կարգի օգնականներու լրիւ անդամ է եւ այս անգամ ալ աստիճան կարգի վեցերորդ պայմանը կը սրբէ եւ կ'անցնի, ան կը ներկայանայ բուն սկաուտը՝ որ զիսէ իր կենցաղը համաձայնեցնել բնութեան եւ բացօթեայ կեանքի: Ասկէ զատ ան գիտէ նաեւ ապրիլ եւ երջանիկ զգալ, վայելելով մի միայն այն նիւթերը որոնք իր տրամադրութեան ներքեւ կը գտնուին: Առաջին կարգի գիտելիք վեցի համար անհրաժեշտ պայման է որ ընտելութիւնը կատարուի բացօթեայ վայր մը եւ դաշտային վայրայանի վրայ: Սկաուտները պէտք է գիտնան թէ բանակումներու միջոցին, իրենց ուտելիքը պէտք է ըլլայ սննդարար եւ առատ, բայց՝ ոչ աւելորդ: Սկաուտը կայուն կեանք չի վայելի ան ստիպումէ: Էականութիւթ մը մէջ՝ պատրաստել իր բոլոր կազմածները եւ այդ բոլորը շալկած երբեմն ժամերով քաղի, այնպէս որ՝ եթէ իր կազմածները ծանրաբեռնուած են աւելորդ եւ զանազան ուտելիքներով, կրնան չափազանց նեղել եւ յոգնեցնել զինքը: Այս անպատեհութիւնը զիրար կը հարթուի, երբ սկաուտը քանի մը բանակումներէն վերջ՝ փորձառու դառնայ: Քաղաքի եւ բանակումի կերակուրներու պատրաստութեան մէջ բաւական աչքառու տարբերութիւններ կան, որոնք պէտք չէ որ սկաուտներու ուշադրութենէ վրիպին եւ լաւ է որ նշանակուին՝ հոս նկատի առնուելու համար:

1.— Քաղաքի մէջ, խոհանոցի, խանութ մը կը գտնուի, ուրկէ կարելի է հայթայթել ինչ ուտելիք որ փափաքուի, միեւնոյն ատեն մատանք եւ խոհանոցին պարահները առատութիւն կայ միշտ. իսկ վրանի տակ սկաուտներու պաշարը սահմանափակ է:

